ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 16.09.2022թ. կայացած նիստի N 01 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 9 անդամներից 8-ը, բացակայում էր Նունե Ալավերդյանը:

Օրակարգ՝

1. Կառավարման խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատակարգի հաստատում
2. 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն
3. Ուսումնական հաստատության 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության մասին
4. Հաստատության 2022-2023 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին հավանություն տալու մասին
5. Ընթացիկ հարցեր

Լսեցին՝ Ա.Մարտիրոսյանը ներկայացրեց կառավարման խորհրդի 2022-2023 ուստարվա գործողությունների ժամանակացույցը և աշխատակարգը:

Լսեցին՝ տնօրեն Էլ.Թումանյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը: Նշվեց, որ կազմավորվել են աշակերտական խորհուրդներ, և աշակերտները մեծ ակտիվությամբ մասնակցում են դպրոցական առօրյային, ինչպես նաև սերտ համագործակցություն կա ծնողական խորհրդի հետ:

Լսեցին՝ տնօրեն Էլ.Թումանյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա ներքին գնահատման ցուցանիշները:

Լսեցին՝ գլխավոր հաշվապահ Ռ.Ամիրյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները: Նշվեց, որ 15.09.2022թ-ի դրությամբ ձևավորվել է 18 դասարան, աշակերտների թիվը կազմում է 396 աշակերտ, 10-րդ դասարան ընդունվել է 186 աշակերտ: Տնօրեն Էլ.Թումանյանը նշեց, որ ուսուցիչների 90%-ն ապահովված է դրույքին համապատասխան դասաժամերով:

Որոշեցին՝

1. Հաստատել 2022-2023 ուստարվա կառավարման խորհրդի աշխատակարգը:
2. 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները համարել բավարար:
3. 2022թ. ներքին գնահատման արդյունքները համարել արժանահավատ և հրապարակել դպրոցի կայքում:
4. Հավանության արժանացնել 2022-2023 ուստարվա տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները և ըստ կարգի ներկայացնել լիազոր մարմնի հաստատմանը:

Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան